№ 8 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, ՅՈՒՆՎԱՐԻ 12

ԳԻՆՆ Է 25 Ր.

Մեր հասցէն՝ Թիֆլիս, «Մշակ»-ի խմբագրութիւն, Գանովսկայա, 3.
თბილისი, «მშაკ»-ის რედაქცია
Tiflis, Rédaction „Mschak"
Тифлисъ, Редакція „Мшакъ" Гановская, 3;
Խմբագրատան տելեֆօն՝ 2—53.
Տպարանի տելեֆօն 5—66.

1921
ՅԻՍՈՒՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, ՅՈՒՆՎԱՐԻ 12 № 8

ԳԻՆՆ Է 25 Ր.

Խմբագրութիւնը բաց է առ. ժ. 9—3 (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւններ ընդունւում են ամեն լեզուով, I երեսի վրայ տողը (պետիտ) 15 ռուբլի, IV երես 10 ռուբլի։ Մահազդների համար՝ 600 ռուբլի։
ԱՊԱՌԻԿ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԻ ԸՆԴՈՒՆՈՒՈՒՄ.

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
„ՄՇԱԿ"
ՔԱՂԱՔԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ ԱՄԵՆՕՐԵԱՅ ԼՐԱԳԻՐ
1921 թ. յունուար ամսի համար 1921 թ.
(50-ՐԴ ՏԱՐԻ)
Բաժանորդագինն է՝ (պայմանական) Թիֆլիսում և դուրսը՝ յունուարի 1-ից մինչեւ փետրուարի 1-ը 600 ռուբ.
ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԻ ԸՆԴՈՒՆՒՈՒՄ

ԺՈՂՈՎՐԴ. ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ հովանաւորութեան տակ գտնուող՝
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐ
Տ. Մ. ՓԻԼՈՅԵԱՆԻ
ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ
(Թիֆլիս, Միքայէլեան փող., № 24, հեռախ. 934)։ Խնդիրների ընդունելութիւնը ժամը 10—12 և 5—9-ը։ Պարապմունքներն սկսուելու են յունվարի 20-ից։ Ծրագիրը և կանոնները ուղարկւում և տրւում են [illegible] 20 ռուբլով կուպոնների դիւմանատանը։ 299 10—3

Ի՞ՆՉ ՍՏԱՑԱՆՔ

Մի ամսից աւել է, ինչ Հայաստանը սովետացման է ենթարկուած։ Այդ յեղաշրջումը կատարուեց այնպիսի մի ժամանակ, երբ դժբախտ երկիրը դաշնակցական ապիկարութեան պատճառով հասցուել էր մահուան շեմքին։ Ուստի ամեն մի մարդ, որ հեռու է նախապաշարմունքներից և գիտէ գնահատել դրութիւնն ու իրերը իրանց իսկական արժէքով, բնական էր համարում Հայաստանի սովետացումը, քանի որ շուրջը չը կար մի այլ իրական ույժ, որ պահպանէր երկիրը վերջնական կորստից։ Մենք ամենքս կարծում էինք թէ Սովետական Ռուսիան կարող է գէթ քաղաքական ույժ ներարկել մեռնող երկրի երակների մէջ։ Բացի դրանից, ֆրազները, որքան և անբովանդակ ձայնարկութիւններ լինեն, շատ կրկնուելուց մի որոշ ազդեցութիւն թողնում են լսողների վրայ։ Եւ այսպէս էր այն ժամանակ Մուսթաֆա-Քէմալի նկատմամբ։ Մարդը շարունակ կրկնում էր թէ ինքը հայ ժողովրդի հետ չէ կռւում, այլ դաշնակների և իմպերիալիստների հետ։ Հաւատացին, և հաւատացողները պէտք է, բնականաբար, սպասէին թէ մեծափառ կոմմունիստ միլլիճինները կը հեռանան Հայաստանից, հէնց որ նա կը դառնայ նոյնպէս մի կոմմունիստական երկիր։

Այսպէս հաւատում էր և ընկեր Կասեանի կառավարութիւնը, ուստի իր առաջին գործերից մէկը դարձրեց Ալէքսանդրօպոլի պայմանագրի չըճանաչումը և դիմեց միլլիճիններին, առաջարկելով կնքել նոր դաշնագրութիւն եղբայրական հիմքերի վրայ։

Ամսից աւել է անցել, և հայ ժողովուրդը դեռ չէ տեսնում իր հայրենիքի դրութիւնը մազի չափ անգամ փոխուած։ Առաջուայ պէս քաղցածների և որբերի հայրենիքը բոլորովին կտրուած է աշխարհից։ Ոչինչ հաղորդակցութիւն չը կայ, պօստ և հեռագիր ասած բաներից աղօտ յիշողութիւն է միայն մնացել։ Ինչ պիտի լինի ազգաբնակութեան դրութիւնն այս անճանապարհ երկրում—սարսափելի է մտածելն անգամ։ Առաջուայ պէս Ալէքսանդրօպոլը դեռ Թիւրքերի ձեռքին է և Թիւրքական խժդժութիւնների լուրերն են գալիս այդ անբաղդ երկրից։ Նոյն իսկ Զանգեզուրն ու Նախիջևանը մինչև այսօր չը մտան Սովետական Հայաստանի մէջ, ինչպէս յայտարարել էր Ադրբէջանի կառավարութիւնը։ Գոնէ բացուէր Ղարսկաստանի ճանապարհը,— բայց այս էլ չը կայ։ Մուստաֆա Քէմալը մերժեց վերաքննել Ալէքսանդրօպոլի խայտառակ պայմանագիրը,՝ և յայտնի չէ թէ ինչ պիտի դուրս գայ այս դրութիւնից...

Ընդհանուր առմամբ, այս բոլոր երևոյթները ցոյց են տալիս թէ չափազանցրած էին Սովետական Ռուսաստանի վրայ դրած յոյսերը։ Կարմիր Մոսկվան, ինչպէս երևում է, մտադիր չէ Հայաստանի կոմմունիստների սիրուն աչքերի համար գործօն և կտրուկ քաղաքականութիւն սկսել միլլիական-պանիսլամական արևելքում։ Մինչև այժմ Մոսկվան բաւականացել է միայն ողջոյններ ուղարկելով Սովետական Հայաստանին ամեն տեսակ բարի ցանկութիւններով։ Իսկ բարի ցանկութիւններով, ինչպէս յայտնի է, դժոխքն էլ է սալայատակուած։

Ինչպէս հաղորդում են եկողները, Սովետական Ռուսիան չափազանց թոյլ է Հայաստանում, որպէսզի կարողանայ, եթէ կամենայ անգամ, հեղինակաւոր դարձնել իր ձայնը... Ասում են որ կարմիր զօրքեր շատ չըկան Հայաստանում, և այս բանը լաւ հաշուի են առնում միլլիճինները։

Եւ այսպէս, մեր դժբախտ հայրենիքի դրութիւնը շարունակում է մնալ անորոշ և տարտամ։ Մենք չենք ասում թէ հայ կոմմունիստներն են ստեղծել այդ դրութիւնը։ Ոչ։ Ինչպէս էլ վերաբերուենք նրանց, ճշմարտութիւնը պիտի հարկադրէ մեզ խոստովանել, որ նրանք ստացել են վերջնականապէս քայքայուած մի ժառանգութիւն։

Ամբողջ հարցն այն է թէ իրանք հայ կոմմունիստներն որքան ընդունակ կը լինեն աւերակները շինելու, ստեղծագործելու։

Մինչև այժմ այս հարցի համար էլ չունինք առանձնապէս յուսատու հանգամանքներ։ Մինչև այժմ հայ բոլշևիկները միայն այն են կարողացել անել, որ ազգայնացրել են բանկերը, փակել են բարեգործական ընկերութիւնները, ոչնչացրել են ներքին և արտաքին փոխառութիւնները։ Սա է՝ նոյն շաբլոնային բոլշևիզմը, ինչ Ռուսիայում։

Բայց նա գոհացնել չէ կարող։ Որովհետև Հայաստանը Ռուսիա չէ։ Հայաստանի ցաւը չունի ոչ մի այլ երկիր։ Նրան պէտք է կենդանացնել։ Կենդանացնելու միջոցները չեն երևում։ Ահա ինչն է ցաւալին։

ՈՒՂՂՈՒՄՆԵՐ

Պարտք եմ համարում հերքել պ. Ռաշիդի մի քանի սխալ և զրպարտիչ տեղեկութիւնները, որոնցով խճողուած է նրա «Հայոց Բարեգործական Ընկերութիւնը» յօդուածը («Մշակ» № 6).

1) Ներկայումս Բարեգործական Ընկերութեան Խորհուրդը բացառապէս դաշնակցականներից չէ բաղկացած, ինչպէս կարելի է հետևցնել յօդուածից։ Խորհրդի նիստերին միշտ մասնակցում են Ժողովրդական Կուսակցութեան հինգ անդամներ և մէկն էլ անկուսակցական։

2) Երեք ամիսներից ի վեր վարելով Խորհրդի անդամի պաշտօն, կարող եմ վկայել որ Խորհրդի Նախագահ պ. Զօքի Զօրեանը, թէև դաշնակցական, վերին աստիճանի կոռեկտ և անկողմնակալ [illegible] գործը և նուիրուած է ընկերութեան շահերին։ Այսպէս է և փոխ-Նախագահ պ. Ատոմեանը, անկուսակցական։

3) Պ. Ալէքսանդր Մելիք-Ազարեանը երբէք Ժողովրդական կուսակցութեան անդամ չէ եղել։

4) Խորհրդի ոչ մի անդամ իր պաշտօնավարութեան համար ռոճիկ չէ ստանում։

5) Գրադարանի գրքերն ստուգելու համար լիուլի վարձատրութիւն է նշանակած գրադարանի ծառայողներին, թէև նրանք աշխատում են այն ժամերին, երբ պարտաւոր են գտնուել գրադարանում։ Ստուգութեան գործը մանրազննին կատարում է խորհրդի անդամ պ. Աւետիսեանը. Նրա աշխատանքի մասին ես եմ դեկուցում տուել Խորհրդին, վկայելով որ նրա կատարած աշխատանքը շատ կարևոր է գրադարանի վերակազմութեան և նոր գրացուցակ կազմելու համար։ Խորհուրդը նրան նշանակել է վարձատրութիւն, և ես չը գիտեմ ինչու պ. Աւետիսեանը պիտի ձրի կատարէ այդ մանրակրկիտ գործը։

6) Խորհուրդը պահում է դպրոցներ և ծախսում է նրանց վրայ մէկ ու կէս միլիոն ռուբլի. բոլորովին մտացածին և նոյնիսկ անմիտ բան է յօդուածագրի պնդումը թէ Բարեգործական Ընկերութիւնը դպրոցներ է պահում Ազգային Խորհրդի նպաստով։

7) Գրադարան - ընթերցարանի բաժանորդագինը հինն է մնում, եթէ պ. Ռաշիդը շնորհ անէ հաշուել թէ այժմեան փողով ինչ է անում նախկին 15—20 կոպէկը։

Խոր. անդ.՝ Ա. Բաբախանեան

Հ ե ռ ա գ ի ր ն ե ր

—o—

(ՎՐԱՍՏԱՆԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

12 յունվ.

Սով. Ռուսաստանի պաշտօնագիրը Անգլիային

ԼՕՆԴՕՆ.—Կրասինը յանձնեց Լլօյդ-Ջօրջին պաշտօնագիր արտաքին գործերի ժողովրդական կոմիսարի կողմից, որով պահանջւում է անգլիական կառավարութիւնից կատարել գերիներին փոխանակելու հարցի առիթով կայացած համաձայնութիւնը։

Պաշտօնագիրը վիրաւորական դարձուածքներով մեղադրում է, որ Բրիտանական կառավարութիւնը իր պարտաւորութիւնները խախտում է։

—

Ռուս բանտարկեալների դժգոհութիւնը

ՓԱՐԻԶ.—«Տան»-ը հաղորդում է. Տասերեկրացիներին կոնցէսիաներ տալու մասին սովէտական կառավարութեան բանակցութիւնները եւրոպական մեծ պետութիւնների հետ՝ յարուցանում է դժգոհութիւն ռուս բանտարկեալների շրջանում, որոնք մեղադրում են կառավարութեանը դաւաճանութեան մէջ։

—

Երկրաշարժ

ՓԱՐԻԶ.—Լօնդօնից հաղորդում են, թէ Ճանտվերպէնում տեղի են ունեցել նոր երկրաշարժեր։ 500 մարդ սպանուել և վիրաւորուել են։

—

Ընտրութիւնները Փրանսիայում

ՓԱՐԻԶ, (Սկիզբը չը կայ). — Երէկ երեկոյեան յայտնի դարձան 85 ձայնատւութեան հետեւանքները. տեղերը բաժանուեցին այսպէս. հանրապետականներ (պահպանողականներ) — 15, ձախակողմեան հանրապետականներ—19 արմատականներ և արմատական-սոցիալիստներ—41, սոցիալիստներ—10։ Ընտրութիւնները ըստ երեւոյթին նպաստաւոր են աջակողմեան և ձախակողմեան կուսակցութիւնների ի վնաս կենդրոնի։

—

Սեւրի պայմանագիրը չը պէտք է փոփոխուի

(Հէլլէնական հաղորդագրութիւն)

Լլօյդ-Ջօրջը յայտնեց համայնքների պալատում, թէ բանակցել Քէմալ-փաշայի հետ անհնարին է։ Մենք ցանկանում ենք խաղաղութիւն Փոքր Ասիայում և ուշադրութեան կառնենք ամեն մի խելացի առաջարկ, բայց ես խընդրում եմ պարլամենտից չը բարդացնել մեր քաղաքականութիւնը Արեւելքում, յենուելով այնպիսի դէպքերի վրայ, ինչպէս օրինակ Յունաստանի ընտրութիւնների վրայ։ Չափազանց կենսական շահեր են միացնում Անգլիային Միջերկրական ծովի հետ և մենք կարիք ունենք յոյն ժողովրդի բարեկամութեանը։

Գրէյմէրը խնդրեց պարլամենտին թողնել Սէվրի պայմանագիրը վերաքննելու միտքը, որովհետեւ Անգլիայի համար անհրաժեշտ է խուսափել Արեւելքում երկրի հին դրութեանը վերադառնալուց, որ օրհասական եղաւ Անգլիայի շահերի համար։

(ՌՈՍՏ. ՄԱՄՈՒԼԻ ԲՒՒՐՕ)

—

Վենիզելոսականները շարունակում են կռուել

ԱԹԷՆՔ, 19 դեկտ. Աթէնքի Կ. Պոլսի „Կաֆիմերինի" թերթը հաղորդում է.—Միլիցիայում ձերբակալուած են երկու անհատ, որոնք նպատակ ունէին սպանելու Կոստանդին թագաւորին։ Չը նայած մեր ներդամիտ քաղաքական հակառակորդներին, մենք այնպիսի միջոցների չը դիմեցինք, որպիսին նրանք ընդունեցին Վենիզելոսի վրայ յարձակում գործելուց յետոյ։ Մենք չը սպանեցինք անմեղ մարդիկ, թալանի չենթարկեցինք մեր հակառակորդների խմբագրատները և տները, այլ միայն ձերբակալեցինք Վենիզելոսականների գլխաւորներին առանց Յունաստանը տերրորի տակ դնելու։

—

Քեմալիստները Սեւ եւ Մարմարա ծովերի ափերում

Կ. ՊՕԼԻՍ, 25 դեկտ. „Ստամբուլ" թերթը հաղորդում է թէ Քեմալիստների չետաները այս օրերս երեւացին Սեւ և Մարմարա ծովերի ափերին։ Նրանք յարձակում գործեցին Եալովի և Գիմլիկի վրայ։ Եալովի մօտ կռիւ տեղի ունեցաւ յունական զօրքերի հետ, ուր սպանուեցին 5 յոյն։ Եալովում պատսպարուել են շրջակայ գիւղերի հայերը, որոնք սկզբից փորձ էին անում Քեմալիստներին դիմադրելու։ Յունական զօրքերին հրաման է տրուած դիմադրել նրանց, բայց առաջ չը գնալ։

—

Բուրժուազիայի դէմ

ՄՕՍԿՈՒԱ, 11 յունվ. (ռադիօ).—Տաշկէնտի Սովէտը վճռել է ազատել ծառայութիւնից մանուոր անձանց սպասաւորներին, բացառութեամբ բըժիշկների մօտ ծառայողների, ուղարկելով այդ սպասաւորներին մանկապարտէզներ։ Նախկին պաշտօնեաների և տնատէրերի բնակարանները հանուած են էլեքտրական լուսաւորութեան ցանցից։ Լուսաւորութիւնը կը տրուի դպրոցներին և հիւանդանոցներին։

Տ ի կ ի ն Զ ա ր բ է լ

—o—

ՀԱՅ ԲԵՄԻ ԽԻՂԱՐԸ

—

Յունվարի 10-ին, երկուշաբթի կատարուեց հայ բեմի բազմաշխատ դերասանուհի, տիկ. Զարբէլի քառասնամեակը. մի յոբելեան, որ մօտ է բոլորի սրտին, մի անձն, որին և սըրտէ համակրում են բոլորը։

Ի՞նչ է դրա գաղտնիքը։

Ամ ի մօտոյ ծանօթ է տիկնոջ բեմական գործունէութեան, նա ձեզ կասէ, որ այդ գաղտնիքը տիկնոջ վերին աստիճանի, նոյն իսկ օրինակելի պարտաճանաչութիւնն է, գործը սիրելն է ու իր բարի ու վարուող անձնաւորութիւնն է։ Նա իր քառասնամեայ աշխատաւորութեան շրջանում բերէք չէ պատահել, որ իրեն տուած դերը վերադարձնի, միշտ ժամանակին եղել է փորձերին ու խաղերին, միշտ սովորել է իր դերը և ինչ դեր վերցրել է, կատարել է բարեխղճութեամբ։

Ճիշտ է։ տիկ. Զարբէլը խոշոր տաղանդ չէ, բայց նա այն պէտքական քարն է եղել թատրոնական շինուածքի մէջ, որ երբ պատի արտնքում պէտք է եղել մի յարմար քանով լրացնել, այդ քարի—խիպարի—դերը կատարել է նա, տիկ. Զարբէլը։

Նա ինչպէս Թիֆլիսում, նոյնպէս և Թիֆլիսից դուրս—գաւառներում իր այդ առաւելութեամբ միշտ լաւ տեղ է գրաւել իր ընկերների մէջ, շատ անգամ նոյն իսկ նրանց համար մօր դեր կատարել։

Տիկ. Զարբէլը ժամանակցել է հայ բեմին 1980-ական թուականներից. ուղիղ այն ժամանակից, երբ Կովկաս ոտք կոխեց մեր բեմի փառք ու պարծանք Պ. Ադամեանը, տիկ. Զարբէլը նրա անբաժան ընկերն է եղել, նոյնիսկ նրա խնամատարը, դեռ աւելին կասենք՝ նա տհադին երախտիք ունի մեծ դերասանի վրայ, քանի որ նա—Ադամեանը—հաւատալով ողեհարցութեան, գիշերները չէր կարող առանց ճրագլոյսի քնել և կարիք ունէր մի օգնականի։

Տիկ. Զարբէլը առաջին քանակութեամբ յիշողութիւններ ունի անմահ Ադամեանի կեանքից, շատ ցանկալի էր, որ այդ յիշողութիւնները գրի առնուէին, քանի որ նրանք շատ պիտանի բաներ են հանդուցեալի կենսագրութեան համար։

Ի սրտէ ողջունելով աղնիւ տիկնոջ քառասնամեակը, ցանկանում ենք, որ նա իր կեանքով ու գործունէութեամբ կենդանի օրինակ հանդիսանայ մեր միւս մատաղ դերասանուհիներին։

Յովհ. Մալխասեան

ՔԱՌԱՍՆԱՄԵԱՅ ԴԵՐԱՍԱՆՈՒԹԻՒՆ

—

Ամսիս 10-ին, Արտիստական թատրոնում տեղի ունեցաւ դերասանուհի Զարբէլի բեմական գործունէութեան յոբելեանական հանդէսը։

Յարգելի յոբելեարուհու քառասնամեայ դերասանութիւնը ընդգրկում է մայրենի բեմի ստեղծագործական զարգացման պատմութիւնը։

Դերասանուհի Զարբէլը քառասուն տարի առաջ հանդէս է գալիս բեմ հանգուցեալ Ադամեանի խմբի հետ և շատ շուտով դառնում հանճարեղ դերասանի մտերիմ բեմական ընկերը, ուղեկցելով նրան գրեթէ դերասանական բոլոր շրջագայութիւններին։

Թիֆլիսում 79-ական թուականներից տ. Զարբէլը իր ծաղիկ հասակից սկսած մինչև ներկայ ժամանակները անդադրում կրել է հայ դերասանին վիճակուած բոլոր դառնութիւնները, նիւթական ծանր և անապահով կացութիւնը։

Նրան ոչինչ չէ հրապուրել. քառասուն տարուայ ընթացքում՝ մարդիկ ոչնչութիւնից հասել են երջանկութեան՝ բախտաւոր և ապահով կեանքի, մտածել են իրանց անձնական բարիքների մասին, իսկ տ. Զարբէլը տարուած էր բեմական արուեստով, նրա հոգու և մտքի զբաղմունքն ստարկան էր միմիայն դերասանութիւնը։ Ահա թէ ինչու տ. Զարբէլը մեր դերասանների շարքում օրինակելիներից մէկն է հանդիսանում։ Բարեխիղճ դերակատար, ճշտապահ և օրինապահ, ոչ ցուրտը, ոչ քաղցը ոչ կենսական նեղութիւնները և կարիքները չեն կասեցրել նրան իր պարտականութիւնները ճշտօրէն կատարելուն։

Յարգելի յոբելեարուհին ինչպէս եղել է և մայրենի բեմի արժանաւոր մշակը, նա իր կեանքի ամենալուսաւոր շրջանը զոհաբերել է հայ թատրոնին։

Եւ երկուշաբթի կայացած յոբելեանական հանդէսը ապացուցեց, որ հայ հասարակութիւնը գնահատում է մեր տաղանդաւոր դերասանուհու հին ծառայութիւնը հայ բեմին և գեղարուեստին։

Ներկայացումը անցաւ մեծաւեծ ովացիաներով տիկ. Զարբէլի հասցէին և նիւթական կողմից միանգամայն յաջող։

Ա. Ն.

ՄԱՂԱԹ-ԽԱՆՈՒՄ—

ՏԻԿԻՆ ԶԱՐԲԷԼԻՆ

«Գըլը-Գուղու» հեղինակ ՅՈՎ. ԹՈՒՄԱՆԵԱՆԻՑ

—

Մեր պատմական, մեր պատուական
Ղարաբաղի լեռներից,
Ջըւարճախօս Գըլը-Գուղու
Հայրենիքի կողմերից,

Որտեղ խորունկ ձորի միջով
Թարթառ գետն է միշտ հոսում,
Հին օրի անց ու դարձը
Անվերջ պատմում ու խօսում.

Հայոց մելիք Շահնազարի
Մալաք-Թանում ամուսնուց,
Որի պատկերն այնպէս շքեղ
Տալիս ես մեզ Դու վաղուց.—

Քեզ բերւր օրհնանք, բարի մաղթանք
Քառասնամեայ Քո տօնին.
Սիրոյ ողջոյն, խինդ ու բերկրանք
Թող միանայ այս ձօնին։

Շնորհաւորանք ու մեծարանք
Գըլը-Գուղուց, Վիտխից,
Նախշուն-աքեր պըլակներից
Եւ Հուսայի նրա հարսից…

10 յունվարի 1921 թ.
Թիֆլիս

ՊԵՏԱԿԱՆ ԴՐԱՄԱՏԻԿ ԹԱՏՐՈՆ

Հայոց Դրամատիկ ընկ. երկուշաբթի, յունվարի 10-ին, ի պատիւ վաստակաւոր դերասանուհի տիկ. Զարբէլի 40-ամեայ բեմական գործունէութեան, տուեց իր այս սեզոնի առաջին յոբելեանական ներկայացումը։ Բեմադրուեց ֆրանսիական կեանքից 5 գործողութեամբ մի մելոդրամա, իսկ երկրորդ բաժինը կազմուած էր յոբելեանական հանդէսից։

Այդ ներկայացումը մի յաղթական ներկայացում էր, որպիսին պատիւ է բերում թէ Դրամ. Ընկ. վարչութեանը և թէ դերասանական խմբին։ Թատրոնը ծայր է ի ծայր լիքը լինելով, հաստատում էր այն փաստը, թէ մեր հասարակութիւնն էլ, վերջապէս, գիտակցում է թէ ժամանակ է արդէն մեր բեմի չարքաշ մշակներին վարձատրել թէ բարոյապէս և թէ նիւթապէս։ Յոբելեարուհու բեմի վրայ երեւալու պէս, թատրոնի հոծ բազմութիւնը, ինչպէս մի մարմին, բուռն և երկարատեւ ծափահարութեամբ ընդունեց։ Ներկայացումը անցաւ սահուն և լաւ։ Սկսուեց յոբելեանական հանդէսը, որին սրտատրոփ սպասում էր ամբողջ հասարակութիւնը։ Վարագոյրը բարձրանալուն պէս, բեմի վրայ խմբուած էին ամբողջ դերասանական խումբը և հասարակական զանազան ներկայացուցիչներ, որոնք եկել էին շնորհաւորելու յոբելեարուհուն։ Այդ ժամանակ լսուեց գալօրկեստրից շեփորների ձայն և յոբելեարուհին բեմ դուրս եկ ուղեկցութեամբ գեր. Տէր-Դաւթեան «Պէպօ»-ի Կակուլու շորերով, և դերասանուհի տիկ. Վարդուհու։ Բուռն ծափահարութիւնը երկար ժամանակ չէր դադարում, մինչև որ յոբելեարուհին նստեց իրեն յատկացրած բազկաթոռի վրայ իր աջ ու ձախ ...

նալով պ. Տէր-Դաւթեանին և տիկ. Վարդանուհուն։

Ընթացեալ պ. Մեղնիկեանը յայտարարեց յոբելեանական հանդէսը բացուած։ Շնորհների ձայնի ուղեկցութեամբ սաստ եկան շնորհաւորողները՝ յոբելեանական մասնաժ. կողմից պ. պ. Սարեան և Ա. Թումանեան, Վրաց կառ. պետ. թատրոնների կողմից պ. Դաւալաձէն, որը դափնէ պսակ ներկայացնելով յոբելեարուհուն, վրաց և հայ լեզուներով բարեմաղթութիւններ մաղթեց, Դրամ. Ընկ. խորհրդի կողմից շնորհաւորեց Արշ. Տէր-Յարութիւնեան, Վրաստ. Հայոց Ազգային Խորհրդի կողմից պ. Դարբինեան, որը յայտնեց թէ յոբելեարուհուն յատկացրած է 20,000 ր., գերասանական խմբի կողմից տիկ. Գուլազեան, Վրաց Դրամատիկ և Գեղ. Թատր. կողմից դերասան Ջիգին, յանձնեց նաև մի ծրար, Ժող. Տան կողմից պ. Լ. Քալանթար, հայ սիրողների կողմից պ. Էլիզբարեան, որը յայտնեց թէ հնարաւոր է ստացել թէ յոբելեարուհուն նուիրաբերած է Դրամ. Ընկ. 30,000 ր., Վրաց սիրողների կողմից պ. Փիրումեան, վրաց լեզուով, Կամերնի թատրոնի կողմից պ. Օրախելաշվիլի, Հուլաբարի սիրողների սեկցիայի կողմից պ. Մայսուրաձէ, Վրաց Գրողների կողմից բանաստեղծ Գրիշաշվիլի, Ազատ Թատրոնի կողմից պ. Բեկանեան, որը յանձնեց նաև մի ծրար, Բագուի Թուրք օպերայի կողմից դերասանուհի Տարասևիչ, «Մշակի» խմբագրութեան կողմից պ. Ա. Նազարէթեան, Արևմտահայ Հայրենակցական բիւրոյից Տէր-Յարութիւնեանը յայտնեց թէ յոբելեարուհուն նշանակուած է ամսաթոշակ. մի խումբ հայ դերձակներից մի ծրար 27,600 ռ., Ախալցխայի Թատերասէրներից—10,000 ռ., հայ դերասանական միութեան կողմից—պ. Ալիխանեան, որ յանձնեց հայ դերարուեստութեան մի էմբլէմ և այլն։

Ընթացեալ կարդացուեց շնորհաւորական հեռագրերը և գրութիւնները։ Պ. Մեղնիկեանը յայտնեց թէ սովետական միսիան յատկացրել է յոբելեարուհուն 50,000 ռ. և թէ Յոբելեանական մասնաժողովը հաւաքել է այդ առթիւ 200,000 ռ.։ Բացի դրանից նուէրներ են ստացուել ալիւրով, իւղով և այլ մթերքներով։

Յոբելեարուհին, վերջում իր շնորհակալութիւնը յայտնեց թէ Դրամատիկ. Ընկ. Խորհրդին, թէ Յոբել. մասնաժողովին և թէ իրան յարգող հասարակութեանը, խնդրելով միայն, որ թողնեն իրան մեռնելու հայ բեմի վրայ։

Հանդէսը վերջացաւ մօտ ժամի 2-ին բուռն ծափահարութիւններով և հասարակութիւնը ցրուեց գոհ սրտով։

Բ. Ա.

Վերջին պօստ

ՊՈԼՍԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԽԱՂԵՐԸ

,,Աշխատաւորի,, սեփ. թղթակիցը Տրապիզոնից հաղորդում է.

,,Պոլսի կառավարութիւնը կարգադրել է Անգօրայի կառավարութեան թողնել առնել, որ Կարաբէքիրը իրեն անջատուած յայտարարի Անգօրայի կառավարութիւնից հետևեալ նկատառումներով. Անատոլը կարող է սահպել Պոլսին ,,հաշտուել,, Անգօրայի հետ։ Անգօրան այդպիսով դադարում է «յեղափոխական» կամ «ապստամբ» կոչուելուց, որով Անատոլիի պահանջները կարող են տարածուել և Անգօրայի կառավարութեան վրայ։ «Ապագայ Թիւրիմացութիւնները աւելի բարդացնելու և Անատոլի հետ նոր լեզուով խօսելու համար, ասուած է հրահանգի մէջ, պէտք է Կարաբէքիրը նոյն դերը խաղայ միացեալ Տաճկաստանի համար, ինչ խաղաց Բէմալը մինչև այսօր։ Սրա համար, Կարաբէքիր փաշան անջատուում է Անգօրայից, յայտարարում անկախ պետութիւն ներկայ գրաւած վայրերի շրջաններում և հիմնում պլեբեսցիտ լօզունգի վրայ»։ Սպասելի է, որ Կարաբէքիրը չքաշուի Ալէքսանդրապոլից, այլ մեծացնի նոյն իսկ իր նուաճողական ծրագիրը և այդպիսով խնդրի ծանրութիւնը տեղափոխի Հայաստան։ Ապագայ բանակցութիւնների ժամանակ Պոլիսը կըպահանջի Անատոլից զիջումներ անել իրեն ի հաշիւ Հայաստանի, որից յետոյ «միջոցներ ձեռք կառնի» խաղաղացնելու համար» «ապստամբ» Կարաբէքիրին։

Հայաստան

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆՆԵՐԻՆ ԴԱՏԵԼՈՒ ԵՆ

«Աշխատաւորը» հաղորդում է, թէ Հայաստանի Յեղափոխական Կոմիտէն մտադիր է ստեղծել «Դաշնակցական դատավարութիւն»։

Ձերբակալուած դաշնակցականներին պահում են բանտում խիստ հսկողութեան տակ։

Հաստատուած է յատուկ մարմին դաշնակցականների գործի քննութեան համար։

ՀԱՅԿԱԿԱՆ ՆՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

«Սթամպուլ» (№ 279) թերթը հաղորդում է հետևեալը. «Հայաստանի Հանրապետութեան պատուիրակութեան նախագահ Աւետիս Ահարոնեանը միջոցներ է ձեռք առնում կազմել Փարիզում նոր, Երևանի բոլշևիկական իշխանութիւնից անկախ, հայկական կառավարութիւն, որ և ներկայանալու է Եւրոպայի առաջ իբրև միակ օրինական հայկական կառավարութիւն»։

ԺՈՂ. ԿՈՄ. ՉԻՉԵՐԻՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ ԱՆԳՕՐԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԸ ԴԱՏԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևան, 5 յուն. Անգօրիայի կառավարութեան կողմից յարուցած Հայաստանի մի քանի հարցերի առթիւ, Սովետական Ռուսաստանի արտաքին գործերի ժող. կոմիսար Չիչերինը պատասխանել է, ի միջի այլոց, հետևեալը.—«Սովետական Ռուսաստանը շատ է համոզուած, թէ սովետական Հայաստանը կարող է եղբայրական կապ հաստատել հայ և թուրք ժողովուրդների միջև և հաւատացած է, որ տաճկական կառավարութիւնը, որի նպատակը նոյնն է, միջոցներ ձեռք կառնի անմիջապէս դատարկելու Ալէքսանդրապօլի շրջանը թուրք բանակից, որպէսզի ոչ մի վնաս չի պատճառի Տաճկաստանին մշտական սահմանները կազմելու բանակցութիւնների ժամանակ։

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ Է

Երևան, 3 յունվարի—Սովետական Հայաստանում կազմակերպուել են պարենաւորման և կուլտուրա-կրթական բաժանմունքները, որոնք արդէն գործում են։ Կողք-կողքի ապրող հայ և թուրք ազգաբնակութեան վայրերում հայ լեզուի հետ զուգընթաց ընդունուած է նաև և թրքական լեզուն։

Հակա-յեղափոխութեան, սպեկուլեացիայի և պաշտօնատար անձերի զեղծումների դէմ կռիւ մղելու համար հիմնուած է «Չիկա» ընկ. Այվազովի նախագահութեամբ։ Առանձին եռուն գործունէութեան մէջ են ագիտացիայի և մամուլի բաժանմունքները։

Բացի հայ և ռուս լեզուներով հրատարակուած «Կոմմունիստ»-ից լոյս են տեսնում Կավրոստի պատի լրագիրներ, որոնք ցոյց են տրւում լոյսով։ Փողոցները և հրապարակները փայլում են գեղարուեստական պլակատներով, նկարներով և կոչերով, որոնք չտեսնուած երևոյթ են կազմում Երևանի համար և մեծ հետաքրքրութիւն են առաջ բերում ժողովրդական մասսաներում։

(Աշխ. Տ. Բ.)

ՀՈՂԵՐԻ ԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Երևան, 2 յունվ.—Բէգերի, մելիքների, խաների, վանքերի և մզկիթների հողերը յայտարարուած են որպէս սեփականութիւն աշխատաւոր ժողովրդի, որին անցնում են նոյնպէս հողերի բոլոր հարստութիւնները և հանքերը։ Հայաստանի յեղ. կոմիտէն որոշեց փոխել դաշնակցական կառավարութեան որոշումը փախած թուրքերի կալուածները բռնագրաւելու մասին, որի մասին յայտարարել է լայն խաւերում։

ՄԵՏՐԻԿՆԵՐԻ ՎԱՐՈՒՄԸ ԱՌՆՈՒՈՒՄ Է ՀՈԳԵՒՈՐ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԻՑ

Երևան, 5 յունվ.—Հայաստանի յեղափոխական կոմիտէի հրամանով, բոլոր մետրիկական արձանագրութիւնները փոփոխութեան են ենթարկւում։ Հոգևոր վարչութիւնների գործավարութեան վարումը և արձանագրութիւնների վաւերացումը յանձնւում է յեղ. կոմիտէին, ներքին գործերի ժող. կոմիսարութեան կից հիմնւում է մի առանձին բաժանմունք վաւերացնելու քաղաքացիական արձանագրութիւնները։

ԹՈՒՐՔԻ ՀՐԱՒԷՐ ՀԱՅՈՑ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Երևան, 5 յունվ. Հայաստանի յեղ. կոմիտէն որոշել է ընդունել իր անդամների շարքում ընկ. Սուլէյման Նուրիին։

ՕՐՈՒԱՅ ՀՐԱՏԱՊ ՀԱՐՑԵՐ

Երևան, 3 յունվ.—Շտապ աշխատանքներ են կատարւում կանոնաւորելու բնակարանային և պարենաւորման խնդիրները, որոնք օրուայ հրատապ հարցեր են կազմում։ Այլ և կազմակերպւում է ազգաբնակութեան թիւը պարզելու խնդիրը։

80 հոգի ինստրուկտորներ արդէն սկսել են աշխատել այդ մասին։

ՋՐԱՄԲԱՐԻ ՇԻՆՈՒԹԻՒՆ

Երևան, 2 յուն. Հայաստանի ժող. կոմ. խորհուրդը միջոցներ է ձեռք առել շուտով աւարտելու Թոխմախլեի ջրամբարի շինութեան աշխատանքները։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Հայաստանում հաղորդակցութիւնը կանոնաւորելու համար եռանդուն միջոցներ են ձեռնարկած։ Բագուից Երևան է ուղարկուած Արևելեան բիւրոյի լիազօր ընկ. Յովսէփեանը։ Հեռագրական միջնորդութիւն է յարուցուած համառ. կենտր. ռուս. ճանապ. հաղորդակցութիւն առաջ Հայաստան ուղարկել մասնագէտներ, որոնք տիրապետում են հայ լեզուին։

Հայաստանի պրոֆ. միութիւններին առանձին տեղեր են յատկացրած հաղորդակցութեան դասընթացներում, որոնք բացւում են Հայաստանի սովետ. ճանապ. հաղորդ. կից։

ԵՐԵՔ ԹԱԳԱՒՈՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Կ. Պօլիս, 30 դեկտ.—Երրեակ դաշնակցութիւն կազմելու հարցի առթիւ անձնական բանակցութիւններ վարելու համար՝ շուտով Ֆերդինանդի մօտ են գալու Բուխարէստ յունական թագաւոր Կոնստանդինը և բուլղարական թագաւոր Բորիսը։

ԶՕՐԱՀԱՒԱՔ ԱՆԱՏՕԼԻԱՅՈՒՄ

Կ. Պօլիս, 30 դեկտ,—Անատօլիայի ազգային ինքնապաշտպանութեան կոմիտէն իր տիրապետութեան շրջանում յայտարարել է 1884—1900 թ. թ. ծնուած երիտասարդների զօրահաւաք, առանց ազգութեան խտրութեան։

ՅՈՅՆԵՐԻ ՄԵԿՆՈՒՄԸ ԱՐԳԵԼՈՒԱԾ

Կ. Պօլիս, 4 յուն.—Աթէնքի կառավարութիւնը արգելել է յոյներին մեկնել Թրակիայից Կ. Պօլիս։

ՄԵԿՆՈՒՄ ԵՆ

Աթէնք, 3 յուն.—Քաղաքական և հասարակական շրջաններում յամառ կերպով խօսւում է, թէ դաշնակից դեսպանները շուտով մեկնելու են Աթէնքից։

ՄԶԿԻԹՆԵՐԸ

Կ. Պօլիս, 4 յունվ.—Սուլէյմանիէ մզկիթը ազատեցին զօրամասերից և ենթարկուեց ախտահանութեան։ Ազատւում են նաև Լալալի, Սուլթան-Ահմէդ և Շահ-Զադէ մզկիթները։

ՅՈՒՆԱԿԱՆ ՆԱՒԵՐԸ ՄԵԿՆՈՒՄ ԵՆ Կ. ՊՕԼՍԻՑ

Կ. Պօլիս, 4 յունվ.—Յունական պատերազմանաւերը կանչւում են Կ. Պօլսից։ Ծովային օֆիցէրները պէտք է մեկնեն Յունաստան։

Քրօնիկոն

Թիֆլիսի էլեկտրաքարշի վարչութիւնը, ի նկատի ունենալով կենտրոնական կայարանի մեքենաների համար պահանջուող վառելանիւթի անբաւարար քանակը, որոշել է բանեցնել էլեկտրաքարշը առ. ժամը 8-ից մինչև ցեր. ժ. 4-ը միայն, որի հետևանքով ենթադրութիւն կայ ծառայողների քանակը կրճատել՝ արձակելով պաշտօնից մօտ 200 հոգի։

◆ Վրաց կառավարութեան նախագահ Ն. Ն. Ժորդանիան յունվ. 11-ն գնացքով մեկնեց դէպի Լանչխուտ կայարանը։

◆ Անա երրորդ օրն է չէ գործում Թիֆլիսի էլեկտրաքարշը։

◆ Եղանակը Թիֆլիսում, խիստ սառնամանիքներից յետոյ, սկսել է աստիճանաբար տաքանալ։

◆ Եւրոպայի խաղաղար պատուիրակութեան նախագահ Ն. Ս. Չխէիձէն կառավարութեան յունվարի 4-ի ժողովում զեկուցում տուեց Եւրոպայի խաղաղարար պատուիրակութեան աշխատանքների մասին։ Կառավարութիւնը լսելով զեկուցումը, որոշեց ունենալ ի նկատի։

◆ Ներքին գործերի նախարարութիւնը կառավարութեան յունվարի 4-ի ժողովում զեկուցած տուեց, որից

երեւում է թէ Բաթումի քաղաքային ինքնավարութիւնը սանիտարական հարկեր է նշանակել 100 միլիոն գումարի:

◆ Ջալալ-Օղլուց Սահմանադիր Ժողովի անդամներ՝ Վարդոյեանի, Շեվչուկի, Չխէիձէի և Կովալեվի, կառավարութեանը ուղարկուած է հետեւեալ հեռագիրը.—Բանակի ձախ թեւն այցելութեան ժամանակ Սահմանադիր Ժողովի անդամներին հանդիպեցին ոգեւորութեամբ: Տրամադրութիւնը գեղեցիկ է: Զօրահրամանատարին կից ազգաբնակութիւնը զարմանում է հազուագիւտ կարգապահութեան վրայ և գովում է զինուորների վարմունքը: Բանակը խնդրում է ողջունել կառավարութեանը և խոստանում է իր քաջութեամբ և մերկացրած սրերով, դեմոկրատական հայրենիքի պաշտպանութեան էջերում աւելացնել նոր փայլուն երեսներ:

Դորա հետ միասին միեւնոյն ստորագրութիւններով, կառավարութեանը և գվարդիայի գլխաւոր շտաբին, ուղարկուած է հետեւեալ հեռագիրը.—Բանակի աջ թեւն այցելելիս, բանակը և գվարդիան ոգեւորութեամբ ընդունեց Սահմանադիր Ժողովի անդամներին: Ամենքը մոռացել են իրենց անձնական կեանքը և պատրաստ են իրանց կեանքը դնել հանրապետութեան անկախութեան և բարօրութեան համար: Բանակը և գվարդիան երդւում են ոչ մի կտոր հող չզիջել իրենց ջերմ սիրուած հայրենիքից:

◆ Այսօր, երեկ. ժ. 7-ին, «Պուշկինեան» գրադարանում տեղի կունենայ Ներս. դպ. VII դաս. ինքնավարութեան IX-րդ հերթական դասախօսութիւնը: Կը խօսի պ. Նիկ. Սարգսեանը «Կեանքի ծագումը» նիւթի մասին: Մուտքը՝ 30 րուբ.:

Վրիպակներ.—«Մշակի» երեկուայ համարում հեռագրերի մէջ (Ռումինիան և Ռուսաստանը) տպուած էր «Ռումինիան չէ պատրաստւում պատերազմել Սով. Ռուս. դէմ» պէտք է լինի «չէ պատրաստւում». Չիչերինի բողոքի առթիւ «Էլէֆթէրոս»-ի յօդուածի մէջ տպուած է... դաշնակիցների շուրջ աջակցութիւնը «պէտք է լինի լուրջ. նոյն յօդուածում տպուած է՝ «Ռուսաստանը այսօր կանգնած է համաշխարհային բանուորական շարժման գլուխ, ուժեղ և անհարկու Թիւրքիայի հետ». պէտք է լինի «ուժեղ և անհարկու Թիւրքիայի հետ». Նոյն յօդուածի վերջում տպուած է՝ «չէ սպառնացել Արեւմուտքի Արեւելքին. պէտք է լինի «Արեւմուտքին եւ Արեւելքին». Հայաստան բաժնում տպուած է «ռուսական պետական բոլոր գոյութիւն ունեցող հաստատութիւնները». պէտք է լինի «պետական բանկի»:

Թատրոն եւ երաժշտ.

«ԶԱՐԻՔԻ ՎԵՐՋԸ»

(Մանկական օպերա)

—

Գեղարուեստը մարդկային հոգու ամենաբարձր արգասիքներից մէկն է և այս կամ այն ձեւով ու չափով յատուկ բոլոր ազգերին, նրա ծագելն ու մանաւանդ զարգանալը անմիջապէս կախում ունի ժողովրդի բարօրութիւնից և քաղաքական անդորրութիւնից:

Առողջ երաժշտական-գրական աշխատանք ստեղծելու համար հարկաւոր է առողջ, դրական և այն էլ անդուլ աշխատանք: Մեծ կը լինի այն մարդու աշխատանքը, որը իր գրուածքներով կը մօտենայ մանկան նրբազգաց հոգուն, նրա նման կըզգայ ու նրա նման էլ կերգի:

Զուր չէր հանդուցեալ Մ. Եքմալեանի գրուած գործը Ներսիսեան դըպրոցում, որը և ժողովրդի պարծանքն էր կազմում և բիւրեղացում իր փայփայած գաղափարների ամբողջացման:

Նրա կենդանի գեղարուեստական գործը, պէտք է խոստովանած, այսօր որոշ չափով շարունակողներ ունի այն էլ իր սնուած, իր ոգով և զգացումներով ներշնչուած սանիկների անդուլ աշխատանքների շնորհիւ: Բացի նրա պատահական և անցողական պիեսներից, գեղարուեստի հմայիչ ոգով տոգորուած անխոնջ աշխատանքի գլուխ է անցել իր պատրաստած աշակերտ Ազատ Մանուկեանը, որի երաժշտական կրթութիւնն ու աննկուն ջանքերը հիմք են ծառայում մեզ յուսալու, որ հայոց աղքատիկ գրական երաժշտական այդ համեստ մշակի գործունէութիւնը շահաւէտ է լինելու: Գեղեցիկ բաներ, շնորհալի գործեր և ցանկութիւններ շատ կան, բայց գեղեցիկ կերպով իրականացնել մեզ տուած չէ, մանաւանդ մեր կեանքում, քանի որ մէկի գեղեցիկ գործերը միշտ դիսհարմօնիա են կազմում գեղեցիկ խօսքերի հետ:

Այն աշխատանքն ու գեղարուեստական ոգին, որ գործադրուած էր Ազատ Մանուկեանի նոր ձայնագրուած «Զարիքի վերջը» մանկական օպերայի մէջ, որը ներկայացուեց հինգշաբթի օրը, ամսոյս 6-ի երեկոյեան, Բարեգործական Ընկերութեան Թատրոնում, գրաւական է նրա գեղարուեստական շնորհքի և ընդունակութեան:

Չը նայած այդ գործը գիտնական աշխատութիւն չէ, բայց և այնպէս արդարութիւնը պահանջում է ասել, որ դա ներշնչուած է ամենաազնիւ բնազդումներով՝ իր մեծ ուսուցիչ-Եկմալեանի ոգով:

«Զարիքի վերջը» օպերան իբրև նոր մանկական ոգու ստեղծագործութեան յատուկ ներդաշնակութիւն, դէպի իրան էր գրաւել մեծ թւով աշակերտներին և երաժշտասէր հասարակութեան: Թէ մեներգներ, թէ խմբերգներ և թէ ընդհանուր առմամբ դերակատար մանուկները թողեցին հանդիսականների վրայ շատ ախորժ և ուրախ տպաւորութիւն: [illegible] ծափերի տակ մի քանի անգամ բեմ դուրս հանուեց հեղինակը, որ և շնորհակալութիւն յայտնեց հասարակութեան դէպի իրան տածած ուշադրութեան և խրախուսանքի համար:

Արսէն քահ. Բերինեան

Թղթակցութիւններ

ՋԱԼԱԼ-ՕՂԼՈՒԻ ԱՆՑՈՒԴԱՐՁԵՐԻՑ

I

Տաճկական արշաւանքի օրերն էին՝ սեպտեմբերի վերջը, հոկտեմբերի սկիզբը:

Հատ ու կտոր լուրեր, անորոշ տեղեկութիւններ մի-մի անգամ հասնում էին մեզ:

Ժողովուրդը խիստ անհանգիստ էր, չգիտէր իր անելիքը. փախչի՞, մնա՞յ, ինչ անի. յիշում էր մօտիկ անցեալի իր կրած նեղութիւնները, փախուստը, Անդրանիկի կռիւները, Ջահէլների կոտորածը ձորում, տաճիկների գալը, տնովին աւերումը...

Յիշում էր ու դողդողում:

Գիւղացիք հաւաքուեցին, խօսեցին, սրտապնդիչ խօսքեր արտասանեցին, իրար խորհուրդներ տուին չըշարժուել տեղից, չփախչել, չքել գիւղը. «դեռ առանձին վտանգ չկայ», ասում էին նրանք, մինչդեռ բոլորն էլ փախչելու մասին էին մտածում:

Լուր հասաւ, որ Ղարսն ու Ալէքսանդրապոլը թուրքերի ձեռքին է, և նրանք արդէն Ջաջուռի տէրն են, որ Համամլուում կռիւ է, փախչող ծիծեռնակներն էլ՝ հայ զինուորներն ու գաղթականների սայլերն երեւացին, ու աւելի լքում մտքերն առանց այն էլ լքուած ժողովրդի մէջ. ամենին միմիայն մի բան էր զբաղեցնում—փախչել, փախչել ուր և լինի, ինչպէս և լինի. և Ջալալ-Օղլեցիք սըրբութեամբ կատարեցին իրանց մտադրութիւնը. Մնացող անհատները ասում, համոզում էին մնալ, զուր չը փախչել... լսող չկար: Գնացին և տուժեցին: Փախչողները ու ապա մի առ ժամանակից յետոյ դարձողները բաւականին կորուստներ ունեցան՝ թէ դրամով, թէ ապրանքներով:

Դէհ, տեղացիների փախուստը որոշ չափով հասկանալի էր. մարդիկ ցանկանում էին իրանց գլուխն ազատել. դուք պէտք է տեսնէիք թէ ինչպէս էին փախցնում պետական գոյքերը՝ թշնամու ձեռքից ազատելու համար: Այդ բանում առաջնութեան դափնին պատկանում է Համբարային վարչութեան տեղիս պահեստների կառավարչին և զօրահրամատարարապետական վարչութեան ներկայացուցչին: Սրանցից առաջինը կարողացաւ տանել բաւականաչափ մթերք՝ գետնախնձոր, ցորեն, նաև ատաղ և սայլեր. Մնացածից ծառայողներն էլ թալանի տուին ու տարան իրանց բաժինը... Միւսը նոյնպէս՝ իր մօտ եղած գոյքը ուղարկեց Չէզոք գօտի, ուր և անյայտացաւ:

Այստեղ կան խնամատարութեան հաշւով պահող որբանոցներ, հազարից աւելի որբերով ու մօտ հարիւր պաշտօնեաներով. որոնց մօտաւորապէս սեպտեմբերի ընթացքում պիտի փոխադրէին Ղարս, յանձնելով Մոսկուայի կոմիտէին: Տեղի ունեցած դէպքերը արգելառիթ եղան նրանց տեղափոխութեան ու նրանք առանց ձմեռուայ պաշար տեսնելու, առանց փայտի, մնացին տեղում, կտրուած կենդրոնից՝ Երեւանից, առանց դրամի...

Ծանր էր լինելու նրանց դրութիւնը, եթէ այդպէս էլ մնային: Ղարաքիլիսայում կար բաւականաչափ մթերապաշար, բայց ստանալ չէր լինում, որովհետև սայլերը չէին գնում, նախ անխիղճ պայմաններ առաջարկելու և երկրորդ՝ բռնագրաւման ենթարկուելու վախի պատճառով: Այդ ժամանակներն էր, որ տեղս եկաւ պարլամենտի անդամ Լ. Զաւաֆեանը, Ղարաքիլիսայի գաւառական զեմստվօյի անդամ Ղամարեանը, որոնց վճռով ու առաջարկութեամբ՝ Համբարային վարչութիւնն իր ունեցածի մնացորդը՝ 39 գլուխ եղջերաւոր անասուններ ու 2—3 ձին, 2,000 փթի չափ գետնախնձոր ու մի քանի մանր բաներ յանձնեց որբանոցներին. Նոյնպէս վարուեցին նաև Մենֆինի ներկայացուցիչները, տալով նոյն որբանոցներին իրենց պահեստում եղածը՝ 400 փութ աղ, 200 փ. բուրդ, մի քանի պարկ շաքարաւաղ և մօտ 30 շիշ կոնեակ ու բաւականաչափ դատարկ պարկեր: Ստացաւ Ղարաքիլիսայից՝ մի քանի պաշտօնեաների անձնադոհութեան գնով՝ 1,800 փութ մթերք:

Որբանոցների համար մի քանի ամսուայ պաշար, որը բաւականանալու է, պաշտօնեաների ասելով, մինչև յունվարի վերջը: Ինչ վերաբերում է պաշտօնեաների ռոճիկներին՝ նրանք ահա 4—5 ամիս է ռոճիկ չեն ստանում, բայց իրանք կարողանում են մի կերպ ապրել՝ որբանոցից օրուայ սնունդն ստանալով:

Փախուստի ժամանակ թէ որբանոցները և թէ պաշտօնեաները, մի երկուսի բացառութեամբ, մնացին իրենց տեղը. Մնացողները նոյն իսկ յորդորում էին հեռացողներին մնալ, չփախչել, գիւղը չդատարկել, բայց լսող չեղաւ:

Հոկտեմբերի վերջերն էր, որ երեւաց վրաց մի փոքրիկ զօրամաս՝ 8—10 հոգուց բաղկացած, որը եկաւ ու մնաց տեղումս. Նրանցից յետոյ եկան հետիոտն զօրամասեր:

Գ Է Ը Է Ն

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹ.

Մեծ. պ. խմբագիր.

Թոյլ տուէք, խնդրեմ, Ձեր թերթի միջոցով յայտնել հետեւեալը.

Դեկտեմբերի 28-ին, երեքշաբթի օրը, Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան դահլիճում (Կամերնի թատրոն) տրուեց „Счастье" պիէսը, յօգուտ Տփխիսի Առաջին Հայկական հասարակական [illegible] գիմնազիոնի: Ներկայացման այն մեծ յաջողութիւնը կապուած էր գեղարուեստի տաղանդաւոր սպասաւորների և ամենքից յարգուած տ. Ե. Տ. Ժիխարեւայի, պ. պ. Դիևսկու, Խողորովի, Կաշեսկու և ուրիշների անուններին, ինչպէս և այն սիրալիր վերաբերմունքի ու եռանդի հետ, որ ցոյց տուեցին տ. տ. Ա. Մ. Աթաբէկեանը, Ե. Բ. Առստամեանը, Մ. Մ. Յաբութիւնեանը, օր. օր. Աթաբէկեանները և գիմնազիոնի տեսուչ պ. Ա. Աղաջանեանը, իսկ Աուկցիոնի և ծրագիրների վաճառման գործում՝ Թատրոնի վարիչ պ. Օբոլենսկին և մի քանի յարգելի օրիորդներ և պարոններ, որոնց ամենքին հրապարակօրէն յայտնում եմ խորին շնորհակալութիւնս և դպրոցի [illegible] աշակերտութեան կողմից մատուցանում երախտագիտութեան գեղեցիկ զգացմունքներից հիւսուած մի ծաղկեփունջ:

Վերատեսուչ գիմնազիոնի՝
Հ. Յովհաննիսեան

Խմբագիր՝ Ս. ԲԱՐԱԽԱՆԵԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԺՈՂՈ-
ՎՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ